Հաստատում եմ՝ 8 հոկտեմբերի 2026թ.
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական գծով պրոռեկտոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Այվազյան Վարդան Վերգեյի

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԱ ՍԱՍՎԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԿԱՅՄԱՆ ԲԱՆԱԼԻ
Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Արդարադատության իրականացման գլխավոր գործիքը խոսքն է, քանի որ հենց օրենքն ինքնին բառերի հաջորդականություն է, որոնց ճիշտ մեկնաբանությունն անհրաժեշտ է հիմնավորված և արդարացի դատական որոշում կայացնելու համար: Իրավական դիսկուրսի հիմքում ընկած հաղորդակցական վարքագծի խոսքային օրինաչափությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը համապատասխանում է ժամանակակից լեզվաբանության տեսական հայացքների զարգացման միտմանը՝ մասնագիտական խոսքային գործունեության մեջ լեզվական միջոցների կիրառման առնչությամբ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է իրավական ոլորտում լեզվի գործառության բարձր սոցիալական նշանակությամբ:

Ատենախոսությունը նվիրված է մեղադրողների և պաշտպանների դատական ելույթներում կիրառվող լեզվական ու հռետորական միջոցների առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Հետազոտության **նպատակն** է բացահայտել, թե ինչպես են այդ միջոցներն օգտագործվում համոզիչ դիսկուրս կառուցելու և դատավորների ու երդվյալ ատենակալների վրա ազդեցություն գործելու համար: Ուսումնասիրության շրջանակում իրականացվում է կողմերի ելույթների ձևաբանական-շարահյուսական, ոճական և հռետորական վերլուծություն՝ առանձնացնելով իրավական փաստարկման մեջ կիրառվող արտահայտչական միջոցներն ու դրանց գործառույթները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում լսարանի և դատական միջավայրի ազդեցությանը՝ համեմատելով երդվյալ ատենակալների և պրոֆեսիոնալ դատավորների ներկայությամբ իրականացվող դատավարություններում կիրառվող լեզվական ու հռետորական ռազմավարությունները:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է դատական գործընթացում կողմերի կողմից կիրառվող լեզվական և փաստարկային միջոցների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, քանի որ դրանց կառուցման և գործածության առանձնահատկությունները կարևոր դեր են խաղում կողմերի դիրքորոշումների ներկայացման և դատավարության մասնակիցների վրա արդյունավետ ազդեցություն գործելու գործընթացում:

Ուսումնասիրության **նորույթը** պայմանավորված է ժամանակակից դատական ելույթների համեմատական ուսումնասիրությամբ, հայկական համատեքստ ունեցող միջազգային դատական գործի վերլուծությամբ և լեզվական ու հռետորական միջոցների համատեղ քննությամբ՝ բացահայտելու, թե ինչպես են հակադիր կողմերը նույն փաստերի վերաբերյալ կառուցում իրենց տարբեր մեկնաբանություններն ու փաստարկները:

Հետազոտության **տեսական նշանակությունն ու գործնական արժեքը** պայմանավորված են նրանով, որ ստացված արդյունքները կարող են ընդլայնել իրավական դիսկուրսի, դատական հռետորաբանության և լեզվաբանության տեսական հիմքերը, ինչպես նաև կիրառվել իրավական հաղորդակցության և հռետորաբանության

ուսումնասիրության, ուսուցման ու հետագա գիտական հետազոտությունների ընթացքում:

Հետազոտության **մեթոդաբանությունը** հիմնված է որակական և քանակական մեթոդների համակցման վրա՝ ներառելով բառիմաստային, լեզվառճական, ձևաբանական-շարահյուսական, հռետորաբանական և դիսկուրսային վերլուծություններ: Բառային և կառուցվածքային չափանիշները համեմատվում են հիմնականում յուրաքանչյուր դատական գործի ներսում՝ հակադիր կողմերի ելույթների հիման վրա, իսկ Արցախի վերաբերյալ դատական գործի վերլուծության ժամանակ հաշվի են առնվում նաև լսարանի, խոսքի մատուցման ձևի, ժանրի և խոսողի դերի առանձնահատկությունները:

Ատենախոսության հետազոտական նյութը ներառում է ԱՄՆ-ում տեղի ունեցած երեք իրական քրեական դատավարությունների և Արդարադատության միջազգային դատարանում քննված մեկ գործի դատական ելույթները: Հետազոտության նյութում ընդգրկված են նաև Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների բանավոր ելույթները Արդարադատության միջազգային դատարանում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, ծանոթագրություններից, եզրակացությունից, գրականության ցանկից, էլեկտրոնային և բառարանագրական աղբյուրներից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի ընտրությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանությունը, ուսումնասիրության ոլորտը, նյութը:

Առաջին գլուխը՝ «Իրավական դիսկուրսի և հռետորաբանության տեսական հիմքերը», բաղկացած է չորս ենթագլխից: Ատենախոսը ներկայացնում է դիսկուրսի, իրավական դիսկուրսի և դատական լեզվաբանության հիմնական տեսական մոտեցումները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դատական ելույթների և դրանցում կիրառվող լեզվի ուսումնասիրությանը: Գլխում անդրադարձ է կատարվում նաև դատական ելույթների վերլուծության մեթոդներին, ինչպես նաև կողմերի համոզիչ խոսքին բնորոշ առանձնահատկություններին, հռետորական և համոզման ռազմավարություններին:

Երկրորդ գլուխը՝ «Լեզվական ու հռետորական ռազմավարությունները դատական ելույթներում», հետազոտության գործնական մասն է և նվիրված է կողմերի ելույթների լեզվական ու հռետորական առանձնահատկությունների վերլուծությանը: Գլխում ուսումնասիրվում են դատական ելույթներում կիրառվող բառապաշարը, ձևաբանական և շարահյուսական կառույցները, լեզվառճական հնարներն ու հռետորական և համոզման միջոցները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դատական ելույթներում լեզվական կառույցների, այդ թվում՝ կրավորական ձևերի, ռազմավարական կիրառությանը և դրանց դերին լսարանի վրա ազդեցություն գործելու գործընթացում: Ջին (1999), Ֆեյրքլաֆը (1989) և Ս. Գասպարյանն ու համահեղինակները (2019) դիսկուրսը և իրավական լեզուն դիտարկում են տարբեր տեսանկյուններից՝ համապատասխանաբար շեշտադրելով լեզվի գործածությունը, իրավական դիսկուրսի դերը հեղինակության, լեգիտիմության և ինստիտուցիոնալ իշխանության ձևավորման գործում, ինչպես նաև իրավական լեզվի՝ որպես պաշտոնական ոճի ենթաոճի հաղորդակցական և լեզվառճական առանձնահատկությունները:

«Դեպքի ուսումնասիրություն I. Դերեկ Շովինի դատավարությունը» ենթագլխում Ջորջ Ֆլոյդի մահվան գործով բացման խոսքերը ենթարկվում են համեմատական լեզվական և հռետորական վերլուծության՝ առանձնացնելով դատախազի և պաշտպանի կողմից կիրառվող հիմնական կառուցվածքային, բառային, ոճական և համոզման միջոցները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կողմերը նույն փաստերի վերաբերյալ կիրառում են տարբեր փաստարկային և հռետորական ռազմավարություններ՝ մասնավորապես շեշտադրելով համապատասխանաբար դեպքի տևողությունը, իրավական հասկացությունները, ապացույցները, ինչպես նաև հռետորական հարցերը, ուղղակի խոսքը, կրկնությունը, փոխաբերությունն ու այլ արտահայտչական միջոցներ:

«Դեպքի ուսումնասիրություն II. Քվանիշա Ջոնսոնի դատավարությունը» ենթագլխում ատենախոսը ցույց է տալիս, որ նույն դեպքը կողմերը ներկայացնում են հակադիր պատումներով, որոնք տարբերակվում են նաև քերականական և լեզվառճական միջոցների կիրառությամբ՝ մասնավորապես ժամանակաձևերի, անաֆորայի, կրկնության, փոխաբերության և հռետորական այլ հնարների միջոցով: Քանակական վերլուծությունը

բացահայտում է, որ դատախազի հակադարձ ելույթը հռետորական միջոցների կիրառության առավել բարձր խտությամբ առանձնացող հատվածն է, մինչդեռ ինքնապաշտպանության և պաշտպանության գաղափարներն արտահայտող բառային միավորներն առավել հաճախ հանդիպում են պաշտպանի ելույթներում: Ընդհանուր առմամբ, վերլուծությունը ցույց է տալիս, որ կողմերը լեզվական և հռետորական տարբեր ռազմավարություններով են ձևավորում նույն դեպքի մեկնաբանությունը՝ ընդգծելով համապատասխանաբար մեղադրանքի և պաշտպանության հիմնավորումները:

«Դեպքի ուսումնասիրություն III. Միջազգային իրավունքը և աշխարհաքաղաքական հակամարտությունը (Արցախի գործը)» ենթագլխում վերլուծվում են Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների ելույթները՝ ուշադրություն դարձնելով դրանց լեզվական, հռետորական և համոզման ռազմավարություններին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու կողմերն էլ կիրառում են բարդ շարահյուսական կառույցներ և պաշտոնական իրավական լեզու, սակայն հռետորական միջոցների ընտրությունն ու կիրառության ինտենսիվությունը տարբեր են՝ պայմանավորված դատարանի պրոֆեսիոնալ լսարանով և միջազգային դատական գործընթացի առանձնահատկություններով: Քանակական և որակական համեմատությունը վկայում է, որ միջազգային դատական միջավայրում հռետորական և ոճական միջոցները չեն վերանում, այլ դրսևորվում են ավելի զուսպ և պաշտոնական ձևով՝ համեմատած երդվյալ ատենակալների մասնակցությամբ ներպետական դատավարությունների հետ:

«Դեպքի ուսումնասիրություն IV. «Մև կարապի» դատավարությունը» ենթագլխում վերլուծվում են Էշլի Բենեֆիլդի գործով դատախազի և պաշտպանի եզրափակիչ ելույթները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կրկնությանը, բառային ընտրությանը, քերականական կառուցվածքներին և հռետորական միջոցներին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կողմերը նույն բառերն ու արտահայտությունները կիրառում են տարբեր իմաստային և փաստարկային ուղղություններով՝ համապատասխանաբար հիմնավորելով մեղադրանքի և ինքնապաշտպանության դիրքորոշումները, իսկ ուղղակի խոսքի և հռետորական հարցերի կիրառումը նպաստում է

երդվյալ ատենակալների ակտիվ ներգրավմանը: Քանակական տվյալները ևս վկայում են կողմերի ռազմավարությունների տարբերության մասին՝ հատկապես ուղղակի խոսքի և հռետորական հարցերի կիրառության հաճախականության առումով, ինչը ցույց է տալիս, որ լեզվական և հռետորական միջոցները կարևոր դեր են կատարում դատական ելույթի ազդեցիկության ձևավորման գործում:

«Դեպքերի համեմատական արդյունքներ» ենթագլխում չորս դատական գործերի շրջանակում համեմատվում են հռետորական/հիպոֆորիկ հարցերի և ուղղակի խոսքի կիրառության հաճախականությունը՝ հաշվի առնելով դատավարության փուլը, գործի բնույթը և լսարանի կազմը: Համեմատությունը ցույց է տալիս, որ այս միջոցների կիրառությունը տարբեր դատական փուլերում էապես տարբերվում է, ընդ որում՝ եզրափակիչ և հատկապես հակադարձ ելույթներում արձանագրվում են ավելի բարձր ցուցանիշներ, ինչը կապված է փաստարկման և կողմի դիրքորոշման առավել ընդգծված ներկայացման անհրաժեշտության հետ: Արդարադատության միջազգային դատարանի գործի համեմատությունը ցույց է տալիս, որ պրոֆեսիոնալ դատավորներին ուղղված ելույթներում հռետորական/հիպոֆորիկ հարցերը կիրառվում են ավելի սահմանափակ, մինչդեռ ուղղակի խոսքը պահպանվում է որպես փաստարկման և ներկայացման միջոց:

Եզրակացություն բաժնում ամփոփվում և համակարգվում են ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրության հիմնական արդյունքները՝ ընդգծելով բացահայտված լեզվական, հռետորական և փաստարկային առանձնահատկությունները:

Այսպիսով, Ջարա Հայրապետյանի ատենախոսությունը արդիական է թե՛ ուսումնասիրության առարկայի, թե՛ ընտրված մեթոդաբանության առումով: Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

1. Իրավական դիսկուրսի շրջանակներում խոսքային ներգործության ռազմավարության ընկալման համար արդյո՞ք որոշիչ նշանակություն ունի հաղորդակցական հակասությունը:
2. Դատական խոսքը հանդես է գալիս ինչպես մենախոսության, այնպես էլ երկխոսության ձևով՝ թե՛ մեղադրանքի և թե՛ պաշտպանության տեսանկյունից: Այն բնութագրվում է ռազմավարությունների և մարտավարությունների բազմազանությամբ; Արդյոք նույն ռազմավարությունը ու լեզվական միջոցներն են կիրառում մեղադրող և պաշտպանող կողմերը:
3. Հեղինակը հաճախ օգտագործում է հիպոֆորիկ հարց եզրույթը: Կարելի ստանալ ավելի մանրամասն պարզաբանում ինչու է այն առավել բնորոշ հենց իրավական դիսկուրսին:
4. Խոսքային ներգործության վերլուծությունը գործաբանության առանցքային ոլորտներից մեկն է: Հարց է ծագում՝ ինչո՞ւ է աշխատանքում գործաբանությունը դիտարկվում հպանցիկ:

Ներկայացված հարցադրումները որևէ կերպ չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքը: Դրանք առավելապես միտված են հետազոտության առանձին դրույթների հստակեցմանը և հետագա գիտական ուսումնասիրությունների շրջանակում դրանց առավել խորքային քննությանը: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացվել է բավականին լուրջ, ինքնուրույն և գիտական ու գործնական նշանակություն ունեցող հետազոտություն, որն առանձնանում է ուսումնասիրվող հիմնախնդրի արդիականությամբ, առաջադրված հարցերի կարևորությամբ և վերլուծությամբ:

Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Սեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Ջարա Սամվելի Հայրապետյանի բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2026 թվականի հոկտեմբերի 08-ին կայացած N3 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Մ. Սարինյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և այլք:

Առաջատար կազմակերպության՝
Ռուս-Հայկական
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ
Գիտքարտուղար՝ Ռ. Ս. Կասաբաբովա

08.10.2026